

Հանրապետական գորակոչային հանձնաժողովի նիստ ՀՀ պաշտպանության նախարարությունում

18.11.2013



2013թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ պաշտպանության նախարարության վարչական համալիրում տեղի ունեցավ հանրապետական գորակոչային հանձնաժողովի նիստ, որին մասնակցում էր նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ, Վայոց ձորի մարզային գորակոչային հանձնաժողովի նախագահ Էդգար Ղազարյանը: Հանձնաժողովի նիստում ամփոփվեցին 2013 թվականի գարնանային գորակոչի արդյունքները և քննարկվեցին 2013-2014 թվականների ձմեռային գորակոչի նախապատրաստության հետ կապված հարցեր: Խորհրդակցությանը, որը վարում էր ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, մասնակցում էին պետական պաշտոնյաներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, մարզպետներ, հանրապետության տարածքային զինկոմներն ու զինկոմիսարիատների համապատասխան բաժանմունքների աշխատակիցներ, բուժհանձնաժողովների անդամներ, բարձրաստիճան զինվորականներ, գորակոչի անցկացմանն օժանդակող այլ կառույցների ներկայացուցիչներ:

Բացելով խորհրդակցությունը՝ Սեյրան Օհանյանը կարևորեց միջոցառման անհրաժեշտությունը, նշելով, որ զինված ուժերի համալրումը հանդիսանում է պաշտպանության համակարգի կարևորագույն խնդիրներից մեկը: Նախարարը գոհունակությամբ փաստեց, որ վերջին տարիներից գորակոչի գործընթացում ներգրավված կառույցների համատեղ իրականացված աշխատանքի արդյունքում գորակոչի կազմակերպումը դրվել է որակապես նոր՝ առավել թափանցիկ հիմքերի վրա:

Հաշվետու զեկույցով հանդես եկավ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը: Անդրադառնալով 2013 թվականի ամառային գորակոչի արդյունքներին և ձմեռային գորակոչի նախապատրաստական աշխատանքներին ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետն առանձնացրեց գորակոչի թե դրական դրսևորումները, թե արձանագրված որոշակի բացթողումները:

Փաստելով, որ նախորդ գորակոչի ընթացքում առաջադրված խնդիրները կատարվել են ՅՈՒ. Խաչատուրովը ներկայացրեց վիճակագրական որոշ տվյալներ, անդրադարձավ զինկոմիսարիատների ու բուժհանձնաժողովների կողմից կատարված աշխատանքներին:

Ընդհանուր առմամբ՝ նիստի ընթացքում քննարկվեցին երիտասարդների կցագրմանը և հաշվառմանը, բուժհետազոտությանը, գորակոչից խուսափողների նկատմամբ պատժամիջոցների կիրառմանը, հանրակրթական հաստատություններում ֆիզիկական պատրաստություն առարկայի դերի բարձրացման անհրաժեշտությանը, ինչպես նաև գորակոչախյն գործընթացի թափանցիկությանն ու արդարության սկզբունքի պահպանմանն առնչվող մի շարք հարցեր:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները և շնորհակալություն հայտնելով ներկաներին կատարված համատեղ աշխատանքի համար՝ Սեյրան Օհանյանը համոզմունք հայտնեց, որ գորակոչի անցկացման համար պատասխանատու բոլոր օղակների սերտ համագործակցության արդյունքում հերթական գորակոչի աշխատանքները կիրականացվեն առավել արդյունավետ և բարձր մակարդակով: Պաշտպանական գերատեսչության ղեկավարը գորակոչի հստակ կազմակերպման և անցկացման առումով տվեց նաև որոշ ցուցումներ, որոնց ուղղությամբ պետք է համապատասխան աշխատանքներ տարվեն:

Խորհրդակցության ավարտին ամառային գորակոչն արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու, այդ գործընթացին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար զինկոմիսարիատների, բուժհանձնաժողովների, պատասխանատու այլ կառույցների մի շարք ներկայացուցիչներ և զինձառայողներ պարզևատրվեցին գերատեսչական մեղալներով, պատվոգրերով և արժեքավոր նվերներով: